

ԽՕՍՔ ՀՈՎԱՆԱԻՈՐԻ

Չեմ յիշեր ինչպես, երբ և ուրկէ սկսաւ այն մեծ համակրանքը, որ կկրեմ հոգիիս մեջ մեծն Թումանեանի նկատմամբ: Թերևս դպրոցական գրքերէս, թերևս պատանեկութեանս ու երիտասարդութեանս տարիներուն անոր ստեղծագործութիւնները կարդալէս ետքը... Ես ընթերցասեր էի, ու հոգիիս մեջ Թումանեանի երկերը իրենց յատուկ տեղը կը գրաւէին: Այտ էր, այո՛, միայն այտ խողը և մեծ համակրանքն էր, որ զիս մղեց հովանաւորելու «Թումանեանական» հրատարակութիւններին 5-րդ հատորը «Ուսումնասիրություններ և հրապարակումներ» Հովի. Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի 8-ըդ եւ 10-րդ հատորները, ապա Նուարդ Թումանեանի մանկութեան երկը ու դեռ պատրաստ պիտի գգամ ինքզինքս օգնելու, որ լոյս ընծայուի ակադեմիկոս Էդ.Ջըրաշեանի «Թումանեանի գրական ժառանգությունը» ուսումնասիրութիւնը:

Թումանեանի մեծ հմայքն էր, որ զիս առաջնորդեց հոգալ անոր ծննդավայրը հանդիսացող Դսեղ գյուղի 75 տարի փակ մնացած եկեղեցին վերանորոգելու ծախսերը, և եկեղեցին վերստին րացուեցաւ (այս տարի հոկտեմբեր ամսի 9-ին) րազմահագար ներկաներու մասնակցութեամբ:

Թումանեանը Լոռի աշխարհի գաւակն էր: Լոռիի րնութեան հմայիչ պատկերները Թումանեանին կը պատկանին: Բարձր սարերին կիրճերը, հեքիաթային սարաւանդներէ մինչև սարահարթները, կանաչագարդ անտառներէն մինչև գուլալ վտակներն ու սառնաջուր աղ-

բիւրները: Ան է որ գրս սիրել տուաւ Լոռիի աշխարհը: Ու այս բոլորէն վերջ, ահա այսօր ինծի կը ներկայանայ Լոռիին նուիրուած ազգագրական – բանահիւսութեան վերաբերող երկասիրութիւն մը, մատենաշարի մը թիւ 20-րդը, որ կ'ընդգրկէ համակ ընօրրանը, վանքերն ու եկեղեցիները, հուշարձաններն ու ամրոցները, Մամիկոնեան իշխաններէն մնացած Բարձրաքաշն ու Քառասունից մանկանցը, ապա Դպրեվանքի հուշարձանը ու Կայանրերոյ ամրոցը, Քոբայրին, Ա.Աստուածածինը: Հայկական հարուստ մեր բնաշխարհի ժողովրդական կեանքի ու կենցաղի պատկերն է հոն, մեր ազգային անցեալի ճշգրիտ պատկերը, մեր եկեղեցասիրութիւնը (Օծունից մինչև Ամնահին ու Հաղպատ), մեր ճարտարապետութեան վեհութիւնը (միջնադարեան միաթռիչք կամուրջներն ու բազմազաւիթ ու բազմանիստ տաճարները), մեր ուսումնատենչ ու հոգևոր կրթութեան մարմաջը (Համալսարան, Մատենադարան, Գրատուն, Ճեմասրահ, Դպրատուն)՝ Գրիգոր Մագիստրոսէն մինչև Աշոտ Ողորմածը:

Թամար Գևորգեանի՝ Լոռիի մասին գրած ուսումնասիրութիւնը, որ ախօի կոչուի «Լոռի – թիւ 20», մեծ երևույթ մը եղաւ ինծի համար, և ես շնորհակալ եմ, որ գիրքին լոյս ընծայելու հովանաւորումը շնորհուեցաւ ինծի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԻՍՈՆԵԱՆ

28.11.1999